ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. **Գործառույթներ.**

Բաժնի առաջատար խորհրդատուն՝

1. Իրականացնում է Արդարադատության նախարարի և ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի հրամանների համաձայն կատարողական վարույթներով ընթացիկ գործունեության տեսչական ստուգում և ծառայողական քննությունների անցկացում,
2. Իրականացնում է կատարողական գործողությունների ընթացքում տարածքային բաժինների կողմից ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին ներկայացված զեկուցագրերի կամ Բաժին ներկայացված գրությունների հիմքով որոշակի կատարողական վարույթների ուսումնասիրությունը,
3. Իրականացնում է քաղաքացիներից և իրավաբանական անձանցից, պետական մարմիններից ստացված դիմում-բողոքների և այլ գրությունների պատասխան գրությունների պատրաստումը,
4. Ապահովում է Ծառայության աշխատակիցների կողմից իրականացվող կատարողական գործողությունների օրինականության նկատմամբ հսկողության գործընթացը,
5. Մասնակցել միատեսակ իրավակիրառ պրակտիկայի մեթոդաբանության մշակմանը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին», «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան.
6. Կատարում է բաժնի կանոնադրությամբ սահմանված և Բաժնի պետի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ.

2. **Պաշտոնին ներկայացվող պահանջները.**

Առաջատար խորհրդատու կարող է նշանակվել այն անձը, որն զբաղեցրել է գլխավոր հարկադիր կատարողի կամ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի կամ հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն մեկ տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երկու տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին նշանակվելու համար մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 2020թ. հուլիսի 30-ի N 461-Ն որոշմամբ: